ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 323-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման պահանջների՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործողությունների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակավայրերում երկրաշարժի ուժգնության աղյուսակը՝ ըստ MSK-64 սանդղակի՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող օբյեկտներում վթարի դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Ուժեղ երկրաշարժի հետևանքով հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N 5 հավելվածի,

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում երկրաշարժի հետևանքների վերացման պլան-ժամանակացույցը՝ համաձայն N 6 հավելվածի,

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 7 հավելվածի,

8) Բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի,

9) Հետախուզության կառավարման սխեման ՝ համաձայն N 9 հավելվածի,

10) Ուժեղ երկրաշարժի դեպքում կապի կազմակերպման սխեման՝ համաձայն N 10 հավելվածի,

11) Տուժած բնակչության և փրկարարական ուժերի սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 11 հավելվածի,

12) Տուժած բնակչության հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 12 հավելվածի,

13) Երևան քաղաքի Դավթաշեն վարչական տարածքից տարահանված բնակչության վրանային ավանի առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 13 հավելվածի,

14) Երևան քաղաքի Դավթաշեն վարչական տարածքից տարահանված բնակչության վրանային ավանի անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սպասարկման հաշվարկը՝ համաձայն N 14 հավելվածի,

15) Երևան քաղաքի Դավթաշեն վարչական տարածքից տարահանված բնակչության սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 15 հավելվածի,

16) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում առկա ինժեներական տեխնիկայի հաշվարկը՝ համաձայն N 16 հավելվածի,

17) Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակավայրերին հասցված վնասների, փրկարարական և վթարավերականգնողական ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 17 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 18-ի *«Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գործողությունների պլանը հաստատելու մասին»* N 323-Ա որոշումը:

3. Սույն որոշման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վ. Վարդանյանի* վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 09
ք. Հրազդան
N 187-Ա